

**<<Ն.ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅՆՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ>>ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ և ՊԱՏՎԱՍՏԱՆՈՅԻԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2021/17-1**

ք. Նոյեմբերյան

«26» փետրվարի 2021 թ.

<<Ն.ՆԱՍԻԲՅԱՆԻ ՆՈՅՆՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ>>ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Գարունիկ Ղուշյանի, որը գործում է <<Ն.ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅՆՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ>>-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Դեղատուն <<Ադոնիս>> ՄՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սպարտակ Անտոնյանի, որը գործում է \_\_\_\_\_ Դեղատուն <<Ադոնիս>> ՄՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

- 2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին . . :
- 2.1.9 Հրաժարվել ապրանքից, եթե հատկացված ֆինանսական միջոցների անբավարարության դեպքում:

## **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.1 Պայմանագրի գինը կազմում է **646 843** (վեց հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր քառասուներեք)՝ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

<sup>18</sup> Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

<sup>19</sup> Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

<sup>20</sup> Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>22</sup>

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

<sup>22</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերի փոփոխության, որոնք կհանգեցնեն պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:<sup>23</sup>

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>24</sup>

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

<sup>23</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«ՆԻԿՈԼԱՅ ՆԱՄԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՆՈՅՏԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ  
Ք.Նոյեմբերյան, Գաբեգին Նժդեհի 15  
«Արդշինբանկ» Նոյեմբերյանի մասնաճյուղ  
ՓԲԸ

Հ/Հ 2476800967620010

ՀՎՀՀ 07404792



**ՎԱՃԱՌՈՂ**

Դեղատուն «Ադոնիս» ՍՊԸ  
Ք.Նոյեմբերյան, Զ.Անդրանիկի 12

ՀՎՀՀ 07400149



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՍՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

		Սպորանքի							մատակարարման		
հրավերով նախատեսված ապրանքի անվանումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրի և ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափանիշները	միավոր	ընդամենը	ընդամենը	ընդամենը	հասցեն	ենթակարգ	ժամկետը**
1.	33621230	Ֆոլաթու 5մգ	Ներքին ընդունման դեղահատեր	հատ	8	400	50	50	Ք. Նոյեմբերյան Գ. Նժդեհի 15	50	25.12.2021թ
2.	33661136	Դիազեպամ 5մգ/մլ-2մլ	Դիազեպամ diazepam սրվակ 5մգ ներարկման լուծույթ	հատ	120	1800	15	15	Ք. Նոյեմբերյան Գ. Նժդեհի 15	15	25.12.2021թ
3.	33661136	Դիազեպամ 5մգ	Դիազեպամ diazepam դեղահատ 5մգ	հատ	12	1800	150	150	Ք. Նոյեմբերյան Գ. Նժդեհի 15	150	25.12.2021թ
4.	33661131	Ֆենոբարբիտալ 0.1	Ֆենոբարբիտալ phenobarbital դեղահատ, 100մգ	հատ	18	1800	100	100	Ք. Նոյեմբերյան Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
5.	33661127	Մետամիզոլ	Մետամիզոլ metamisole լուծույթ	հատ	48	960	20	20	Ք.	20	25.12.2021թ

		նատրիում 50%-2,0	ներարկված 500մգ/մլ, 2մլ							Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
6.	33631300	Կետոպրոֆեն 100մգ 2մլ	Կետոպրոֆեն ketoprofen լուծույթ մ/մլ, ն/է, 100մգ	հաստ	280	2800	10	10	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
7.	33631310	Դիկլոֆենակ 75մգ 3մլ	Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկված 75 մգ/մլ, 3մլ	հաստ	115	2300	20	20	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
8.	33631310	Դիկլոֆենակ 50մգ	Դիկլոֆենակ diclofenac դեղահաստ 50մգ	հաստ	18	900	50	50	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
9.	33661121	Ացետիլսալիցիլաթթու 0,5գ	Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահաստ 500մգ	հաստ	5	250	50	50	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
10.	33661122	Պարացետամոլ օշարակ 125մգ/5մլ	Պարացետամոլ օշարակ 125մգ/5մլ 100ml	հաստ	380	1900	5	5	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
11.	33651131	Սուլֆամետոքսազոլ+տրիմեթոպրիմ 480	Սուլֆամետոքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim, դեղահաստ 400մգ + 80մգ	հաստ	14,6	1460	100	100	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
12.	33611170	Դրոտավերին 40մգ	Դրոտավերին drotaverine դեղահաստ 40մգ	հաստ	9	270	30	30	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		
13.	33691133	Ներարկված թորած ջուր 2,0մլ	Ներարկված ջուր, Water for Injection, լուծիչ ն/է ներարկված համար	հաստ	24	960	40	40	25.12.2021թ	Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15		

14.	33651145	Դեքսամեթազոն և 4մգ/մլ 1,0մլ	Դեքսամեթազոն dexamethasone լուծույթ և/մլ, ն/ե ներարկման 4մգ/մլ, 1մլ	հաստ	88	2640	30	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	30	25.12.2021թ
15.	33671130	Դիֆենհիդրամի և 1% 1,0 մլ	Դիֆենհիդրամին diphenhydramine լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ	հաստ	28,2	846	30	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	30	25.12.2021թ
17	33642210	Պրեդնիզոլոն 5մգ	Պրեդնիզոլոն Prednisolone դեղահաստ 5 մգ	հաստ	9,8	1960	200	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	200	25.12.2021թ
18	33611420	Կալցիումի գլյուկոնատ 10% 5,0 մլ	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ն/ե ներարկման 100մգ/մլ, 5մլ	հաստ	100	1000	10	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	10	25.12.2021թ
19	33691144	Նատրիումի թիոսուլֆատ 30% 5,0մլ	Նատրիումի թիոսուլֆատ, Sodium Thiosulfate, լուծույթ ն/ե ներարկման, 300մգ/մլ 5մլ	հաստ	60	600	10	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	10	25.12.2021թ
20	33611420	Կալցիումի գլյուկոնատ 0,5գ	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate դեղահաստ 500մգ,	հաստ	7	700	100	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
21	33671135	Կալցիումի քլորիդ 10% 5,0մլ	Կալցիումի քլորիդ calcium chloride լուծույթ ն/ե ներարկման 100մգ/մլ, 5մլ	հաստ	45	900	20	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	20	25.12.2021թ
22	33621390	Ամիոդարոն 200մգ	Ամիոդարոն amiodarone դեղահաստ 200մգ	հաստ	90	22500	250	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	250	25.12.2021թ
23	33621700	Մետոպրոլոլ 50մգ	Մետոպրոլոլ metoprolol դեղահաստ 50մգ, ներքին ընդունման	հաստ	26	5200	200	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի	200	25.12.2021թ

24	33621767	Իզոսորբիլի մոնոհիդրատ	Իզոսորբիլի մոնոհիդրատ isosorbide mononitrate երկարատև ձեռքբազանումսմբ 60մգ	հաստ	175	17500	100	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
25	33621760	Էնալապրիլ 10մգ	Էնալապրիլ enalapril դեղահաստ 10մգ	հաստ	7	2100	300	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	300	25.12.2021թ
26	33621360	Գլիցերիլ տրինիտրատ 0,5մգ	Գլիցերիլ տրինիտրատ 0,5 մգ	հաստ	8,5	1020	120	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	120	25.12.2021թ
27	33621380	Դիգոքսին 0,25մգ	Դիգոքսին digoxin դեղահաստ 0,25մգ	հաստ	7	1400	200	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	200	25.12.2021թ
28	33691176	Պանանգին դեղահաստ	Կալիում մագնեզիում ասպարզինատ	հաստ	35	3500	100	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
29	33621750	Նիֆեդիպին 10մգ	Նիֆեդիպին Nifedipine դեղահաստ 10 մգ	հաստ	16,6	830	50	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	50	25.12.2021թ
30	33621450	Ամլոդիպին 5մգ	Ամլոդիպին amlodipine դեղահաստ 5 մգ	հաստ	21,9	10950	500	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	500	25.12.2021թ
31	33621450	Ամլոդիպին 10մգ	Ամլոդիպին amlodipine դեղահաստ 10մգ	հաստ	34,7	10410	300	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	300	25.12.2021թ
32	33621450	Լիզինուպրիլ 20մգ	Դեղահաստեր	հաստ	57,6	17280	300	15 բ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	300	25.12.2021թ

33	33621450	Լուգարտան 50մգ	դեղահաստ 50մգ	հաստ		62	31000	500	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	500	25.12.2021թ
34	33621730	Վերապամիլ 40 մգ	Վերապամիլ verapamil դեղահաստ 40մգ ներքին ընդունման	հաստ		21,3	1065	50	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	50	25.12.2021թ
35	33621680	Պրոպրանոլոլ 40մգ	Պրոպրանոլոլ propranolol դեղահաստ, 40 մգ ներքին ընդունման	հաստ		4	200	50	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	50	25.12.2021թ
36	33621690	Կարվեդիլոլ 12,5մգ	Կարվեդիլոլ, carvedilol դեղահաստ 12,5մգ, ներքին ընդունման	հաստ		37,5	7500	200	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	200	25.12.2021թ
37	33621690	Կարվեդիլոլ 25մգ	Կարվեդիլոլ 25մգ	հաստ		50	10000	200	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	200	25.12.2021թ
38	33621690	Կարվեդիլոլ 6,25մգ	Կարվեդիլոլ, carvedilol դեղահաստ 6,25մգ, ներքին ընդունման	հաստ		26,3	2630	100	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	100	25.12.2021թ
39	33621760	Էնալապրիլ 5մգ	Դեղահաստեր ներքին ընդունման	հաստ		6,2	1240	200	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	200	25.12.2021թ
40	33621510	Կապտոպրիլ 0,025	Կապտոպրիլ captopril դեղահաստ 25մգ	հաստ		4,9	980	200	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նոյեմբերյան 15	200	25.12.2021թ
41	33611341	Վիտամին Դ3	ներքին ընդունման	հաստ		1850	18500	10	Ֆ.	10	25.12.2021թ

42	33691176	Ֆերում-լեկ օշարակ 50մգ/5մլ 100մլ	Ֆերում-լեկ օշարակ 50մգ/5մլ ներքին ընդունման	հաստ	1650	16500	10	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	10	25.12.2021թ
43	33621110	Վարֆարին 2,5 մգ	Վարֆարին warfarin դեղահաստ 2,5մգ	հաստ	17,2	1720	100	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
44	33651112	Ամօքսիցիլին+քլ ավուլանաթթու 625մգ	Ամօքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղահաստ 500մգ+125մգ	հաստ	180	9000	50	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	50	25.12.2021թ
45	33651111	Ամօքսիցիլին դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ 100մլ	Ամօքսիցիլին amoxicillin դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 250մգ/5մլ	հաստ	950	9500	10	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	10	25.12.2021թ
46	33651112	Ամօքսիցիլին+քլ ավուլանաթթու 312մգ/5մլ	Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 312մգ/5մլ	հաստ	3900	39000	10	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	10	25.12.2021թ
47	33691112	Մետրոնիդազոլ 250մգ	Մետրոնիդազոլ, metronidazole դեղահաստ 250մգ ներքին ընդունման	հաստ	7	350	50	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	50	25.12.2021թ
48	33651115	Ցեֆալեքսին 500 մգ	Ցեֆալեքսին cefalexin դեղապատիճ 500մգ ներքին ընդունման	հաստ	55,7	8355	150	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	150	25.12.2021թ
49	33651134	Ցիպրոֆլոքսացին 500մգ	Ցիպրոֆլոքսացին ciprofloxacin, դեղահաստ, 500մգ ներքին ընդունման	հաստ	41,7	6255	150	Ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	150	25.12.2021թ

50	33651111	Ամօքսիցիլին 0,5	Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ 500մգ ներքին ընդունման	հաստ		50	5000	100	15 ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
51	33661151	Ացիկլովիր 200մգ	Ացիկլովիր, acyclovir դեղահաստ 200մգ ներքին ընդունման	հաստ		20	3000	150	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	150	25.12.2021թ
52	33621590	Ֆուրոսեմիդ 40մգ	Ֆուրոսեմիդ furosemide, դեղահաստ 40մգ ներքին ընդունման	հաստ		4,6	460	100	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
53	33621620	Սպիրոնոլակտոն 50մգ	Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահաստ 50 մգ ներքին ընդունման	հաստ		81,6	8160	100	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
54	33651253	Տամօքսիֆեն 20մգ	Տամօքսիֆեն tamoxifen, դեղահաստ, 20մգ	հաստ		95	28500	300	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	300	25.12.2021թ
55	33651252	Անատրոպոլ 1 մգ	Դեղահաստ 1մգ, թաղանթապատ դեղահաստ ներքին ընդունման համար	հաստ		420	84000	200	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	200	25.12.2021թ
56	33691222	Ցինարիզին 25մգ	Ցինարիզին 25մգ	հաստ		6,2	310	50	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	50	25.12.2021թ
57	33691186	Պիրացետամ 0,4գ	Պիրացետամ Piracetam 0.4գ	հաստ		12,9	387	30	ֆ. Նոյեմբերյան , Գ. Նժդեհի 15	30	25.12.2021թ
58	33611160	Մետոկլոպրամ իդ 10մգ/2մլ	Մետոկլոպրամիդ metoclopramide լուծույթ ն/ե, մ/մլ ներարկման	հաստ		60	3000	50	ֆ. Նոյեմբերյան	50	25.12.2021թ

59	33691176	Ռեհիդրոն փոշի ներքին ընդունման ջրավերականգնիչ արկեր	10նգ/մլ, 2մլ	հատ	250	5000	20	Ֆ. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	20	25.12.2021թ
60	33611100	Օմեպրազոլ 20նգ	Օմեպրազոլ omeprazole, դեղապատիճ, 20նգ	հատ	12	6000	500	Ֆ. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	500	25.12.2021թ
61	33611120	Ֆամոտիդին 20նգ	Ֆամոտիդին famotidine դեղահատ 20նգ	հատ	15	1500	100	Ֆ. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	100	25.12.2021թ
62	33611200	Լոպերամիդ 2նգ	Լոպերամիդ Loperamide դեղահատ 2նգ	հատ	9,1	455	50	Ֆ. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	50	25.12.2021թ
63	33691121	Ալբենդազոլ 400նգ	Դեղահատ ծամելու	հատ	200	6000	30	Ֆ. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	30	25.12.2021թ
